

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

<i>Ասատրյան Լիլիթ</i>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<i>Ենգիբարյան Վիկտոր</i>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<i>Ջադոյան Կարեն</i>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<i>Խաչատրյան Լիա</i>	«Չարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<i>Համբարձումյան Սասուն</i>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<i>Հովհաննիսյան Միհրան</i>	«Եղվարդ» ՋՕԸ
<i>Ղազարյան Տոնական</i>	«Շենիկ» ՋՕԸ
<i>Մախյան Նարինե</i>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<i>Մովսիսյան Կարինե</i>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<i>Միքայելյան Շիրակ</i>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<i>Նազարյան Հազարայետ</i>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<i>Շահինյան Պողոս</i>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<i>Ոսկանյան Արման</i>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<i>Վերանյան Անդրանիկ</i>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<i>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</i>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

<i>Արա Հովսեփյան</i>	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
<i>Սայրոն Հիրնիակ</i>	ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրենի տեղակալ
<i>Վիկտորյա Գրիգորյան</i>	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ

ՇԽ երկրորդ կազմի անդամներ

<i>Աբրահամյան Հակոբ</i>	Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն
<i>Բարսեղյան Լևոն</i>	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
<i>Հովհաննիսյան Արայիկ</i>	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
<i>Հովհաննիսյան Վեհանուշ</i>	«Սեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
<i>Նազարյան Կարեն</i>	Հայաստանի միջկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
<i>Ոսկանյան Աշոտ</i>	«Ազրոզարգացում» ՀԿ

2008թ. ընտրական հանձնաժողովի անդամներ

<i>Վարուժան Սահակյան</i>	Ջրվեժ-Չորադրյուր ՋՕԸ
<i>Գենիկ Մովսիսյան</i>	«Էկոգեն» ՀԿ
<i>Հոմերոս Սաֆարյան</i>	Վարդենիս ՋՕԸ
<i>Ալինա Լալայան</i>	«Արարատի մարզի կանաչներ» ՀԿ
<i>Վահագն Ասրյան</i>	«Սեմանտ» ՀԿ
<i>Գայանե Արսենյան</i>	«ՍԱԿ-ի հայկական ասոցիացիա» ՀԿ

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ

<i>Թամարա Աբրահամյան</i>	«Արագ» ՀԿ
<i>Ինգա Հարությունյան</i>	«Հայ պրոֆեսիոնալների դաշինք» ՀԿ
<i>Մարիաննա Ֆրունջյան</i>	«Էգո» երիտասարդ հոգեբանների ՀԿ

Նաիրա Ալթունյան

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամ, Հայաստան

Ռոզա Հովհաննիսյան
Լիանա Մնացականյան
Իննա Վերլինսկայա
Լիլիթ Հարությունյան
Տիգրան Միրանյան
Միրուշ Պետրոսյան

ՉԼՄՆ երկայացուցիչներ
«Արմեն Պրես» 1/գ
«ԱԲ» ՀԸ
«Առկա» 1/գ
«Ազատություն» ռադիոկայան
«Հ1» ՀԸ
«Արմենիա» TV

Բացման խոսքով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանը: Նա շնորհավորեց ՇԽ նոր անդամներին ընտրվելու կապակցությամբ: Ա. Հովսեփյանը նշեց, որ ՇԽ անդամներն ընտրվում են յուրաքանչյուր ծրագրային տարի՝ նպատակ ունենալով նորացնել ՇԽ կազմը, դրան հաղորդել նոր շունչ: Ա. Հովսեփյանը ողջունեց նաև ընտրական հանձնաժողովի ներկա անդամներին և նշեց, որ իրենց կողմից իրականացվել է մեծ աշխատանք և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը բարձր է գնահատում անցակացված ընտրական գործընթացը:

Այնուհետև, Ա. Հովսեփյանը խոսքը փոխանցեց ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Լալայանին՝ ներկայացնելու սեպտեմբերի 27-ին կայացած ՇԽ անդամների ընտրության արդյունքները:

Ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Լալայանը ներկայացրեց ընտրության հիմնական ցուցանիշները, առավելագույն ձայներ հավաքած 15 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Հանձնաժողովի քարտուղարը շնորհավորեց ՇԽ նոր անդամներին և մաղթեց արդյունավետ ստեղծագործական աշխատանք:

Ի երախտագիտություն ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամների ընտրության և անցկացման գործում ներդրած ավանդի՝ ՀՄՀ-Հայաստանի տնօրեն Ա. Հովսեփյանը հանդիսավոր կերպով շնորհակալագրեր հանձնեց Ընտրական հանձնաժողովի անդամներ Վ. Սահակյանին, Գ. Մովսիսյանին, Հ. Սաֆարյանին, Ա. Լալայանին, Վ. Ասրյանին, Գ. Արսենյանին և Հ. Հայրապետյանին (Հ. Հայրապետյանը չէր մասնակցում նիստին):

Համաձայն նախատեսված օրակարգի Ա. Հովսեփյանն առաջարկեց ՇԽ նոր անդամներին ներկայանալ: Նորընտիր անդամները համառոտ ներկայացրեցին իրենց ներկայացնող կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղությունները և պարզաբանեցին ՇԽ-ում ընտրվելու իրենց դրոպաատճառները և նպատակները:

Մինչ նիստի պաշտոնական մասին անցնելը՝ Ա. Հովսեփյանը ներկայացրեց նիստին ներկա ՇԽ երկրորդ կազմի անդամներին: Նա շնորհակալություն հայտնեց կատարած ծավալուն աշխատանքի համար: Ա. Հովսեփյանը հույս հայտնեց, որ ՇԽ նոր կազմը էլ ավելի կամրապնդի ՀՄՀ-Հայաստանի բարի անունը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ ծրագիրն այժմ գտնվում է նոր փուլում՝ շինարարական աշխատանքները ստացել են նոր թափ: Ա. Հովսեփյանն արտահայտեց նաև այն կարծիքը, որ ՇԽ երկրորդ կազմի անդամների հետ մեկ կամ երկու տարվա աշխատանքի շնորհիվ ձևավորվել է սերտ կապ և խրախուսեց նոր անդամների աջակցել այդ կապի պահպանմանը ի օգուտ ծրագրի արդյունավետ իրականացման:

ՇԽ երկրորդ կազմի անդամները նույնպես արտահայտվեցին, ներկայացրեցին իրենց խորհուրդները, առաջարկությունները առաջիկա աշխատանքներն ավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, հնչեցին նաև շնորհավորական խոսքեր:

Այնուհետև, Ա. Հովսեփյանն առաջարկեց ընտրել նախագահող և սկսել նիստի գործնական մասը: Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Կ. Ջադոյանի թեկնածությունը և հաստատվեց միաձայն:

Նախագահողն առաջարկեց վերաձևակերպել օրակարգը հետևյալ կերպ՝

1. ԿԽ անդամների ընտրություններ
2. ՇԽ Կանոնակարգի վերանայման նպատակով հանձնախմբի ստեղծում
3. Որպես հետադարձ կապի մեխանիզմ ՇԽ նորընտիր անդամների վերաբերյալ տեղեկատվական ամփոփաթերթիկի կազման աշխատանքների քննարկում, համապատասխան հանձնաժողովի ստեղծում
4. ՇԽ նիստերի հաճախականության սահմանում

Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը կամ ներկայացնել այլ առաջարկություններ, լրացումներ:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ՝ Կառավարման խորհրդի անդամների ընտրություն

Նախագահողն առաջարկեց ՇԽ երկրորդ կազմի անդամներին ներկայացնել նախորդ տարվա ԿԽ անդամների ընտրության փորձառությունը:

Ա. Ոսկանյանը նշեց, որ ԿԽ անդամների ընտրությունն անցկացվել է համաձայն ՇԽ գործող Կանոնակարգի, այն է ԿԽ 5 անդամներն ընտրվում են ՇԽ կազմից փակ գաղտնի քվեարկությամբ:

ՇԽ անդամների ընտրությունների անցկացման վերաբերյալ եղան հետևյալ առաջարկությունները՝

Ձևաչափի վերաբերյալ՝

Վերջնականապես որոշել ՇԽ կանոնակարգային հակասությունները, որից հետո միայն անցկացնել ԿԽ անդամների ընտրությունները՝ ՇԽ անդամ Տ. Դազարյան:

Ժամկետի վերաբերյալ՝

ԿԽ անդամների ընտրությունն անցկացնել երկու շաբաթվա ընթացքում՝ հնարավորություն տալով նոր անդամների իրար ավելի լավ ճանաչել մինչ ընտրությունները՝ Կ. Մովսիսյան,

ԿԽ անդամների ընտրությունն անցկացնել մեկ շաբաթվա ընթացքում, առաջիկա երկուշաբթի օրը, հոկտեմբերի 13-ին՝ Կ. Ջադոյան:

Քննարկման և ընդհանուր համաձայնության արդյունքում քվեարկության դրվեց հետևյալ առաջարկությունը՝ ԿԽ անդամների ընտրությունն անցկացնել հոկտեմբերի 13-ին, ժամը 16:00-ին, և հաստատվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ ՇԽ Կանոնակարգի վերանայման նպատակով հասույկ հանձնախմբի ստեղծում

Նիստի նախագահող Կ. Ջադոյանն առաջարկեց ստեղծել հանձնաժողով, սահմանել մեկ ամիս ժամկետ, որի ընթացքում հանձնաժողովը կուսումնասիրի Կանոնակարգի առկա բոլոր նախագծերը և առաջարկությունները, կստեղծի մեկ ընդհանուր նախագիծ, որը կդրվի քննարկման:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանն առաջարկեց հանձնաժողովի կազմում ընդգրկել Կ. Ջադոյանին՝ որպես իրավաբան և հավելեց, որ ցանկալի կլինի նաև ունենալ տարբեր ոլորտների ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի ձևաչափի վերաբերյալ եղան հետևյալ առաջարկները՝

ՇԽ անդամ Պ. Շահինյանն առաջարկեց չսահմանափակել հանձնաժողովի անդամների թիվը, այլ հնարավորություն տալ բոլոր ցանկացող անդամներին ներգրավվել համապատասխան աշխատանքներում:

ՇԽ անդամ Ա. Վերանյանն առաջարկեց մինչ հանձնաժողովի աշխատանքների մեկնարկը սահմանել հստակ ժամկետ, որի ընթացքում բոլոր անդամները կուղարկեն իրենց առաջարկությունները. հանձնաժողովը կամփոփի բոլոր առաջարկությունները և խորհրդի դատին կներկայացնի Կանոնակարգի նախնական նախագիծը:

Պաշտպանելով Ա. Վերանյանի առաջարկությունը՝ Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ պետք է սահմանել մեկամսյա ժամկետ, որի ընթացքում ՇԽ բոլոր անդամները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց առաջարկությունները, իսկ վերջնական նախագիծի վերաբերյալ անցկացնել ևս մեկ առանձին քննարկում:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար առաջարկվեցին նաև ՇԽ անդամներ Լ. Խաչատրյանի, Ա. Տեր-Հովակիմյանի և Տ. Գազարյանի թեկնածությունները:

Ամփոփելով բոլոր առաջարկությունները՝ նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին քվեարկել հետևյալ ամփոփ առաջարկը՝

15 օրվա ընթացքում բոլոր ՇԽ անդամներն ուղարկեն իրենց առաջարկությունները ՇԽ Կանոնակարգի վերաբերյալ, 10 օրվա ժամկետում հանձնաժողովը մշակի Կանոնակարգի նախագիծը և 5 օրվա ժամկետում Կանոնակարգի նախագիծը դնել քննարկման և քվեարկության. որպես հանձնաժողովի անդամներ առաջարկվել են հետևյալ թեկնածությունները՝ Կ. Ջադոյան, Պ. Շահինյան, Լ. Խաչատրյան, Ա. Տեր-Հովակիմյան և Տ. Գազարյան:

ՇԽ անդամները միաձայն հաստատեցին առաջիկա գործողությունների կազմակերպման վերոնշյալ ձևաչափը:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ՝ որպես հետադարձ կապի մեխանիզմ ՇԽ նորընտիր անդամների վերաբերյալ տեղեկատվական ամփոփաթերթիկի կազման աշխատանքների քննարկում, համապատասխան հանձնաժողովի ստեղծում

Նիստի նախագահողը ներկայացրեց իր դիրքորոշում առաջարկության վերաբերյալ. հաշվի առնելով այն փաստը, որ ՇԽ անդամները կոչված են ապահովելու մասնակցային գործընթացը ՀՄՀ-Հայաստան ծրագրում, ինչպես նաև ապահովել հետադարձ կապը բազմահազար շահառուների հետ՝ առաջարկվում է ստեղծել հանձնաժողով՝ նպատակով ունենալով ստեղծել տեղեկատվական գրքույկ, ամփոփաթերթիկ (կամ այլ ձևաչափով) ՇԽ նորընտիր անդամների և իրենց ներկայցնող

կազմկերպությունների վերաբերյալ: Առաջարկվեց ՇԽ անդամներին որքան հնարավոր է շուտ ուղարկել տեղեկատվություն համատապասխան ամփոփաթերթիկը պատրաստելու նպատակով:

Վերոնշյալի վերաբերյալ եղան նաև մասնավոր առաջարկներ. ունենալ էլեկտրոնային հասցեներ MCA.AM կայքում (Պ. Շահինյան), ստեղծել էլեկտրոնային խմբեր հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով:

Որպես համապատասխան հանձնաժողովի անդամներ առաջարկվեցին Կ. Մովսիսյանի, Ս. Համբարձումյանի և Ա. Վերանյանի թեկնածությունները:

Վերոնշյալ առաջարկությունները հաստատվեցին միաձայն:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ՝ ՇԽ նիստերի հաճախականություն

ՇԽ անդամ Ա. Վերանյանն առաջարկեց առաջիկա մեկ-երկու ամիսների ընթացքում ավելի հաճախակի գումարել ՇԽ նիստեր՝ համատեղ աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Առաջարկությանը դեմ արտահայտվողներ չեղան:

Այլ հարցեր

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենը ներկայացրեց հետևյալ հարցերը՝

- ՇԽ աշխատանքնային պլան կազմելու վերաբերյալ
- առաջիկայում ՇԽ արտագնա նիստ անցկացնելու վերաբերյալ:

ՇԽ անդամները ողջունեցին վերոնշյալ առաջարկները և որոշեցին համապատասխան հարցերի քննարկումն ընդգրկել առաջիկայում կայանալիք ՇԽ նիստի օրակարգային հարցերի շրջանակներում:

Նախագահող - Կ. Չաղոյան

Քարտուղար - Վ. Գրիգորյան

7-ր հոկտեմբերի, 2008թ.